ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիս, 2019 թվականի № 20-Լ

«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրականացնելով «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 02/14.21/3263-19 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության լուծարման հանձնաժողովի կողմից ներկայացված Ընկերության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 2019 թվականի մայիսի 1-ի դրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 մայիս, 2019 թվականի

ք. Երևան